46. ՔՅԱՐԻՄ ԲԵԿ

Կէղի, չէղի տղե մե կէղի. ինք, ուր մամ, ուր քուր ու կնիկ կէղին, չորս ջան կէղին։ Տղի անուն լէ Քյարիմ բեկ կէղի։

Ըդ Քյարիմ բեկն ա կանոթնա, էլ խաց չկա ուտա, օլուշաղ կմնա անոթի, ծարավ, խեղճ։

Կեսա. «Հե՛յ, տեր աստված, ես իմա՞լ էնիմ, էլիմ էրթամ դրկեցներուց խաց մի ուզիմ, արի տես չիտան, ընձի խոսք մի ըսին, ընձի քընց մեռնել լավ ա». կեսա.

— Կնի՛կ, էլիք թորկինք ըստեխեն էրթանք։

Իդոնքն ա գելին ուրանց ջուլ ու բան ման կշալկին ու կէրթան։ Գելին օր թը էլին դուրս էրթան, գրկեցի մի ախչիկ գիգա իտոնց տուն, գիկա կեսա.

— Մարդ, վոլլա ի՞նչ կէնիս, ընդեխ հարուստ մարդ մը կա, ֆիլան հ՚օդեն, էգեր ա մե օսկի գիտա, իդա ֆայդեն նուկի մի միս մարդու ջանից առին։

Ըդ Քյարիմ բեկն ա կեսա.— Վոլլա, կնիկ, ես պըտի էրթամ առնիմ օսկի իգամ, ժուք ու ժամանակ մի իմ ճժեր ուտին, ախըր աստված օղորմած ա։

Գելի կէրթա։ Գելի կէրթա ուր ռեսի հ՚օդեն, կաչքի օր թը հանդե հարուստ մարդն ա, օսկիք փռեր ա ուր հ՚առեճ ու կցուցու խլղին։

Կեսա.— Հարուստ մարդ, օսկիմ լէ գիտա՞ս ընձի, իմ էրեխեք անոթի ին քու ֆայդով։

Հարուստ մարդն ա կեսա.— Հ՝որի՞ չիտամ, քենի օր ֆայ-դով բան ա։

Կառի զէդ օսկին, նուկի մի միս կդրա ուր վրեն ու գիգա։ Կառի գիգա էդ օսկի փարեն տուն։ Կառի միս, կբերա, քիչ մի ալուր ջաֆսիրա կբերա ուր էրեխեքներուն։ Կառի միս, գիգա ուր տուն, էփին օր ուտին։ Դրկեցի կնիկ լէ էրկու խոդով՝ գիգա ըդոր տուն։ Կաշբա օրթը հանդէ միս ի կուտին։

Էղի ա կեսա.— Քուրիկ, արի քիչ մի միս կե ու գնա։

Ըդ Քյարիմ բեկն ա, կէնա, չէնա, ըդ կնիկ չի դա ուտա։

Ըդ կնիկն ա, կէրթա տուն, մ՝սի տուն տղե մի դընցու։

Էդ կնկա իրիկ գիգա տուն, կեսա.— Կնիկ, ըդ ի՞նչ էղեր ա։

Կեսա.— Ըշթա գացի ֆիլան քյասի տուն, միս կուտին, Քյարիմ բեկն էր կղանչեց, ըսեց. «Այ քուրիկ, արի փշըմը միս կի ու ելի գնա». ես լէ ամոթու չկերա, էկա տուն ու տղեն հ՝ընցուցի։

Ըդ կնկա իրիկն ա, կառի փետ ու դեմ կքշա Քյարիմ բեկի տան վրեն. կեսա (խեր լսողաց).

— Քու ֆիլան բեխվանը.... Դու միս կբերիս, իմ կնկան չի-տաս, իմ կնիկ գացե էրեխե մի հ՝ընցուցեր ա, իմ տղի արունք քըզնից կառնիմ։

Կեսա.— Ես քու կնկան էնեցի, չէնեցի չէկավ կերավ, դու խո արունք չես էկեր իս, կպեր իս ընձիկ։

Էդ ու էդիկ կզարկին իրարու։ Կզարկին իրարու, դրկեցներ դընգին մեջտեխ, չթորկին օրթը իրար թըփին։ Էդի ա, կթորկի կէրթա՝ «Իլլահի իմ տղի արընքի դուվին քըգնե կէնիմ»։

Էդի ա կթորկա կէրթա, ըդ մարդն ա կնստի ուր տուն հարի լուսումտուն։ Գելի կէրթա ճրի վրեն օրթը լվացվի, զէն կտեսի օր թը մարդ մի բերի ծին կճրա, կեսա.

— Ախպեր ջան, քա՛ր մի թալ, ըդ ծին ճրու մեջեն ելի իգա, կէնի՛մ չէնի՛մ ճրու մեջեն չելի։

Քյարիմ բեկն ա, կվերցու քար մի օր թը զարկա ճրի մեջ օր թը ծին հ՝ելնի, էլ քար չքիսի ուրիշ տեխ, համա դեմ ճուպ աչք կքիսի, ըդ ծիու աչքն ա օր թը կքիսի, պտուղ օր թը կթափա, ըդ ծիու տերն ա համա կելնա, կխասի Քյարիմ բեկ. ըդ Քյարիմ բեկ ու էդի կխասին իրար։ Ծիու տեր կքֆրա կեսա.

— Դու զարկեցիր իմ ծիու աչք քոռցուցիր։

Էդ լէ ուր ծիու դավին կենա, կեսա.— Իլլահի, ես իմ ծիու դավին քեզնե կէնիմ։

Էդի ա ուր դավին կէնա, էդ էրիկ լէ ուր կնկա էրեխի դավին

կէնա։ Ըդ հարուստ մարդ լէ տարին թմմեր ա, էկե ուր օսկին առնի ու նուկի մի միս չխո կուզա։

Քյարիմ բեկն կեսա.— Կնիկ, հարուստ մարդ լէ էկեր ա օսկին կուզա, նուկի միս կուզա, էս կնիկ լէ ուր տղի դավին կէնա, էն ծիու տեր լէ չխո ուր ծիու աչքի դավին կէնա։ — Կեսա.— Ելի փախինք, քենի մեր աչք ցամաք ա։

Ըդ Քյարիմ բեկն ա, դելի ուր շլեր կկապա, կշալկա օրթը փախի, էրթա, տեսի օր թը մե խրիշտակ մարդ մի իշավ էկավ ուր տուն։

Կեսա.— Այ մարդ, դու դո՞ր կթողիս փախիս էրթաս. ինոնց պարտքեր տուր, նոր գնա,— կեսա,— գնա քու տուն նստի, որն օրթը էկավ քու մոտ պարտքն ուզեց, դու ըսա՝ էրթանք հ՚օնի շարյաթ, ես լէ կէրթամ կէղիմ կազի հանդե։

Էդի ա գելի կէրթա ըդ կազու մոտ, կեսա.

— Կազի ըֆանդի, դու օրեկան ի՞նչ կառնիս։

Կեսա.— Ա՜հ, իշթա կառինք տաս օսկի։

Կեսա.— Առ քըզի տասնուխինգ օսկի փարա, քու կազութենի շորեր տուր ընձիկ։

Կեսա.— Շատ լավ կէղի։

Տասնուխինգ օսկի գիտա կազուն, կազութենի շորեր կառի, կխաքի։

Իդհախսի զէն կտեսի օր կնկա տերն էկավ դավի կէնա, կեսա.

— Քելի իմ տղի արունք տուր, մկա ես իմ տղի արունք կուզիմ,— կեսա,— գիտաս, տուր, չիտաս՝ կղարկիմ քըզի կսպանիմ։

Քյարիմ բեկն ա կեսա. — Ես հար ե՞րբ քըզի ծեն չէնիմ, ես էրեցի չէրեցի քու կնիկ միս չկերավ։ Կտանին, կբերին Քյարիմ բեկ կեսա.— Քելի ես դու էրթանք շարիաթ։

Էն ու էդի դելին կէրթան կազի ըֆանդու մոտ շարիաթ։

— Բարի օր, կազի ըֆանդի։

— Աստծու խեր բարին,— կեսա,— ի՞նչ էղեր ա քըզի։

Քյարիմ բեկն ա կեսա.— Էկեր ինք քու մոտ շարիաթ, կազի ըֆանդի։

Կեսա.— Ի՞նչ էղեր ա։

Կեսա.— Իշթա, ես միս է բերեր ենք, իմ տուն կուտենք, էտ մարդու կնիկ էկավ իմ տուն, էրի, չէրի չէկավ միս կերավ, գնաց տուն էրեխե մի հ՚ընցուց։

Էն մարդուց կխարցուցա.— Մարդ էնպե՞ս ա։

Կեսա. — Հա, կազի ըֆանդի, էնպես էղեր ա։

Կեսա կնկա տիրոջ.— Դե գնա տաս օսկի փարա բեր օդա դիր, ծեր շարիաթ էնիմ,— կեսա,— դինա՞ս շարիաթ ինչպես կբռնամ։

Կեսա.— Ինչպե՞ս կբռնաս, կազի ըֆանդի։

Կեսա.— Քու կնիկ պըտի թասլիմ էնիս ըդ մարդուն, ըն ժամանակ ինչպես լցուկ էր քու կնիկ, ախըր էդ մարդ ա դարտկեր ու քու կնիկ, էլի էն մարդ ըդպես լընա, խորոտիկ թասլիմ էնա քըզիկ։

Էդ տղեն ա կդրա կմեղա, կեսա.— Ջանըմ, էդի իմ էրեխեն տվեց դուրս, դլրպի օր թը իմ կնիկ զքու խետ լէ բան մի էնա։

Կազի ըֆանդին կեսա.— Էդպես ա, կուզիս թասլիմ էրա, կուզիս մի տա։

Էդի ա կեսա.— Կազի ըֆանդի, ես ըդ դավուց հ'ընցա, լազըմ չի էն տղեն ընձի։

Կեսա.— Լաո՜, օր թը հ'ընցար, ըս տաս օսկուց լէ հ'ընցար։

Ըդ տղեն ա ուր պուճուճակ կքերա ու գիգա կնստի ուր տուն։ Էդ Քյարիմ բեկ լէ գիգա ուր տուն։

Քյարիմ բեկն ա, զէն կտեսի օր թը ծիու տերն ա հուռ էնեց քշեց էկավ դռան վրեն։

Կեսա.— Քյարիմ բեկ, էս բոպին իմ ծիու գին գիտաս։

Կեսա.— Ես քու ֆլան բեխվան ..... Ես քու ծիու աչքեր կքոռցուցի՞. գու ասիր զարկ, ես լէ զարկի,— կեսա,— քելի էրթանք շարիաթ, դու հ'որի՞ն բռներ ես իմ փողփադ (օձիք)։ Էդ ու էդի գելին գիգան կազի ըֆանդու մոտ շարիաթ։

Կազի ըֆանդին ա կեսա.— Հա՜, ի՞նչ էղեր ա, տղա։

Կեսա.— Կազի ըֆանդի, էկեր ինք քու մոտ օր շարիաթ էնիս։

Կեսա.— Ի՞նչ էղեր ա։

Կեսա.— Ես գացի վըր ճրուն, էդ մարդ ուր ծին առեր էր, էկեր էր կճրեր։ Էդ մարդ ըսեց. «Ախպեր շան, քար մի թալ իմ ծին թ'ելի ճրու մեշեն իգա»։ Ես լէ զարկեցի. քար մի թալեցի, էն ծիու աչք քոռցավ, էդի լէ մկա ծիու դավին կէնա ընձնե։

Կեսա.— Տղա, էդպե՞ս ա։

Կեսա.— Խա՜, էդպես ա օր էն կեսա։

Կեսա էդ ծիու տիրոջ.— Տաս օսկի փարա բեր դի ըստեխ, ծեր շարիաթ էնիմ։

Ըդ տղեն ա, տաս օսկի կխանա, կդնա ըդ կազու մոտ։

Կազի ըֆանդին ա կեսա.— Տղա՜, դինա՞ս շարիաթ ես ինչպես կբռնիմ։

Կեսա.— Ես ի՞նչ գինամ, գու դինաս։

Կեսա.— Դու պըտի ըդ մարդ տանիս կանգըցուս ըն ճրու օրթալախ, ու քար մի կվերցուս, կէրթաս կկանիս էն մարդու մոտ օրթը կաներ էր ու էնտեխեն կղարկիս դեմ ըդրա ճապ աչք կքոռցուս,— կեսա,— տես, դեմ ճապ աչքի մեջ կղարկիս, քիսի ճակատ, քու վիզ կղարկիմ, ուրիշ տեխ դիպի՝ քու վիզ կղարկիմ, համա դեմ պըտի զարկիս ճապ աչք (ձախ աչք)։

Ըդ տղեն ա կդրա, կմեղա, կեսա.— Ջանըմ,— կեսա,— ես իդա հարուր տարի նշանտար չէղեր իմ ես, ինչպե՞ս պըտի զարկիմ օրթը դե՞մ քիսի ճապ աչք։

Կեսա.— Դուն դինաս, զարկիս լէ քու քեֆն ա, չզարկիս լէ քու քեֆն ա, շարիաթ էսպես կխասի։

Էդի ա կեսա.— Կաղի ըֆանդի, ես իդա դավուց հ'ընցա։

Կեսա.— Օրթը իդա դավուց հ'ընցար, էդա տաս օսկուց լէ հ'ընցար։

Էդի ա կփոշմնի, դե՞մ դիգա ուր տուն։ Ըդ Քյարիմ բեկն ա դելի դիգա տուն, կեսա.

— Կնի՞կ, վոլլա, ես էրկու դավուց հ'ընցա, մնաց դավի մի, ախբր աստված օղորմած ա։ Խաց կուտա, դրա չուտա, զէն կտեսի օրթը ջուաբ գիգա. «Արի, հարուստ մարդ էկեր ա»։ Կեսա. «Հե՞յ, տեր աստված, իդոնցնե էդպես պրծա, իդրնե իմա՞լ պրծիմ»։ Գելի կէրթա, կէրթա ըդ հարուստ մարդու մոտ, կեսա.

— Բարի օր քըզի, հարուստ մարդ։

Կեսա.— Աստծու խեր բարին։ — Հարուստ մարդն ա կեսա.— Տղա, իմ օսկին ու նուկին միս բերե՞ր իս։

Կեսա.— Օսկին չկա, ես հ'ուստե՞ն բերիմ օսկին։

Կեսա.— Ըդ օսկին խո բառադա չտվեր իմ քըզի, վոլլա, քու գլոխ պրտի զարկիմ։

Կեսա.— Հարուստ մարդ, կուզիս իմ գլոխ զարկիս, չզարկիս, օսկի չկա, կուզիս ելի էրթանք շարիաթ։

Կեսա.— Դե ելի էրթանք շարիաթ, շարիաթից ես խո չփախի՞մ։

Գելին ըդ էրկուս կէրթան կաղի ըֆանդու մոտ շարիաթ։

Կաղի ըֆանդին ա կեսա.— Տղա՛, դու հ'որի՞ն էկեր իք։

Կեսա.— Իշթա էկեր ինք քու մոտ շարիաթ,— կեսա։

Կեսա.— Ի՞նչ էղեր ա։

Կեսա.— Իշթա, իմ էրեխեք մանցած ին անոթի, ըսեցին, վոլլա, հարուստ մարդ մի էկեր ա, էկեր ա օսկի մի զիտա, տարին օրթը թըմմավ, օսկին լէ ու նուկի մի միս լէ կառի ուր ֆայդեն, ես լէ ըսի, պըտի էրթամ օսկի մի բերիմ, ժամանակ օրթը թըմմավ,

թըխ իգա օսկին լէ տանի, նուկի մի միս լէ թըխ առի իմ շանից իգա։

Կեսա.—Հարուստ մարդ, հըմա՞լ ա։

Կեսա.— Խա՛, հմալ ա։

Կեսա.— Հարուստ մարդ, եռսուն օսկի փարա տու, ծեր շարիաթ էնիմ։

Էնի ա եռսուն օսկի փարա գիտա ըդ կազի ըֆանդուն։

Կազի ըֆանդին ա կեսա.— Հարուստ մարդ, գնա առ քու նուկի կիշեռք, արի։

Էդի ա կէրթա կառի ուր նուկի կիշեռք, գիգա, կրերա կդնա կազի ըֆանդու մոտ։

Կեսա.— Հարուստ մարդ, դե չախուդ բի, կեսա,— կեսա,— տես, հարուստ մարդ, չախուն կթալիս կկիսիս, նուկուց հ'եվել էղավ, քու գլոխ կղարկիմ, պակաս էղավ օր թը չախուն թալիր, էմ լէ քու գլոխ կղարկիմ, պըտի նուկին թամամ էղի, նա հ'եվել, նա պակաս։

Ըդ հարուստ մարդն էր, դրեց մեղեց, ըսեց.— Ջանըմ,— ըսեց,— ես ինչպե՞ս,— ըսեց,— մի նուկու չափ կիսիմ օր նա հ'եվել իգա, նա պակաս իգա։

Ըսեց.— Քու քեֆն ա,— ըսեց,— իմալ օր կուզես, էնպես կիսա։

Հարուստ մարդն էր ըսեց.— Կազի ըֆանդի, ես էս դավուց հ'ընցա։

Ըսեց.— Օրթը դավուց հ'ընցար, էս եռսուն օսկուց լէ հ'ընցար։

Ըդ հարուստ մարդն էր, թորկեց ու ուր պուպուճակ քերեց ու էկավ տուն։ Էդ Քյարիմ բեկ լէ թողեց էկավ ուր տուն։

Էն խին կազին էր էկավ իշավ, ըսեց.— Կազի ըֆանդի, իդհախս իմ շորեր տուր,— ըսեց,— առ քու շորեր։

Ըսեց.— Կազի ըֆանդի, օրեկան քենի՞ օսկի կաշխատիր։

Ըսեց.— Օրեն կաշխատինք իշթա մե տաս օսկի մի։

Ըսեց.— Էս հ'իսուն օսկին լուսմուտնե աշխատեր իմ։

Կազին էր ըսեց.— Խալալ էղի կազութեն քըզի։

Էդի էր, էդրա շորեր տվեց, առավ ուր փայեն ու էկավ։ Էկավ, էկավ Քյարիմ բեկի տուն, ըսեց.

— Քյարիմ բեկ, ինչի՞ կփախիր էրթեր դուն, էն պարտքնտերերու ախուն։

Ըսեց.— Ապա ի՞նչ էնենք, աղա, ֆուքարա ենք, խեղճ ենք։

Ըսեց.— Առ իդա քառսուն օսկի փարեն լէ քըզի, գնա քու իդարեն էրա, էլ քու տնեն, քու տեիրեն չելիս։

Քյարիմ բեկն էր, փարեն առավ, ուրին մալ ու բան առավ։ Ըդ խրիշտակ լէ ժամուն իդադախ համբարձվավ։

Ինդոնք խասան ուրանց մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։